ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԱՐՄԻՆԻՅԱ ԱՐԱԲԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԸՍՏ ԱՐԱԲԱԳԻՐ ՍԿԶԲՆԱՂԲԻՒՐՆԵՐԻ

ԱՐՍԷՆ ՇԱՀԻՆԵԱՆ
a_shaginyan@mail.ru

Թ. դարի կէսերից արագօրէն սկսեց ձեւաւորուել արաբագիր մատենագրութիւնը՝ այդ թւում աշխարհագրական գրականութեան դպրոցը։ Այդ դպրոցի արաբ ու պարսիկ ներկայացուցիչներից առաջինները՝ Իբն Խուրդադբիհը (մօտ 820-912/3), Իբն Հաուկալը (?-?), Իբն Ռուստան (?-?), Իբն Ալ-Ֆակիհը (?-?), Ալ-Իսթախրին (մօտ 850-934), Կուդաման (մահ. 930/40ականներին) եւ Ալ-Եա՛կուբին (մահ. 897ին) ճանապարհորդել են Հայաստան ու յարակից շատ երկրներ եւ թողել հարուստ ու ստոյգ տեղեկութիւններ[1]։ Համաձայն նրանց, Հայաստանը (արաբ.՝ Արմինիյա), Քարթլին (արաբ.՝ Ջուրզան) եւ Աղուանքը (արաբ.՝ Առան) Արաբական Խալիֆայութեան կազմում (701-886) միաւորուած էին մէկ նահանգի (արաբ.՝ քուր/ա) մէջ, որը «Արմինիյա» էր կոչւում[2]։

Կուդամայի խօսքերով, Արմինիյան՝ դա Ջուրզանն է (Քարթլին), Դաբիլը (Դուինը), Սիրաջ-Տայրը (Շիրակն ու Տայքը), Բաջունայը (Ապահունիքը), Արջիշը (Արճէշը), Խիլատը (Խլաթը), Սիսաջանը (Սիսական/Սիւնիքը), Առանը (Աղուանքը), Կալիկալան (Կարինը), Բասֆուռաջանը (Վասպուրականը) Նաշաւա (Նախճաւան) քաղաքով[3]։ Իբն Ռուստան ներկայացնում է Թ. դարի վերջի Արմինիյա նահանգի խոշոր քաղաքները. Ալ-Բաբ ալ-Աբուաբ (Դարբանդ), Բարձա՛ա (Պարտաւ), Նաշաւա (Նախճաւան), Սիսաջան (Սիսական), Արզան եւ Խիլատ (Խլաթ)[4]։ Արաբագիր մատենագրութեան աշխարհագրական սեռի առաջին՝ Իբն Խուրդադբիհի Քիթաբ Ալ-Մասալիք Ուա Ալ-Մամալիք (Ճանապարհների ու թագաւորութիւնների գիրք) երկում Արմինիյայի տեղանունների շարքում յիշատակւում են նաեւ Ալ-Լակզ (Լեկք)[5], Շիրուան ու Աս-Սանարիյա (Կախէթի) երկրամասերը, Ալբակ (Աղբակ) գաւառը, Բայլական (Փայտակարան), Թիֆլիս (Թբիլիսի/Տփղիս), Խուվայլ (Հեր)[6], Կաբալա (Կապաղակ), Շիմշատ (Արշամաշատ) ու Սուղդաբիլ (Սաղոդեբելի) քաղաքները եւ Աբխազ, Խայզան, Ալ-Ջարդաման (Գարդման), Աշ-Շաբիրան (Շապորան), Շաքքի (Շաքէ) ու Քիսալ (Կասակ) բերդերը[7]։ Ենթա-

խորքից էլ հետեւում է, որ Շիմշատի (Արշամաշատի) ու Հիսն Զիյադի (Անձիտ/Հոռէ բերդի) միջեւ էր անցնում Արմինիյայի հարաւ-արեւմտեան սահմանը, իսկ արեւմուտքում նրա սահմանը հասնում էր մինչեւ (Բիւզանդական) Խալդիյայի (Խաղտիքի) բանակաթեմը։ Հետեւում է նաեւ, որ Արմինիյայի հիւսիսային սահմանով՝ Ալ-Կարկ (Մեծ Կովկասի) լեռներում, ինչպէս նաեւ հիւսիս-արեւմտեան (Բիւզանդիայի հետ) սահմանով մէկ կառուցուած էին հզօր բերդ-դարպասներ. Ալ-Բաբ Ալ-Աբուաբը (Դարբանդը), Բաբ Սահիբ Աս-Սարիրը (Սարիրի Պահակի Դուռը), Բաբ ալ-Լանը (Ալանաց Դուռը), Բաբ Ֆիրուզ Կուբաձը (Փիրուզ Կաւադի Դուռը), Բաբ Լաձիկան (Լազիկայի Դուռը), Բաբ Սամսախին (Սամցխէի Դուռը) եւն.[8]։

Այսպիսով, հիւսիսում Արմինիյայի սահմաններն անցնում էին Խազարական Խաքանութեան հետ Արաբական Խալիֆայութեան պետական սահմանով (Մեծ Կովկասի լեռնաշղթայով), իսկ հիւսիս-արեւմուտքում եւ արեւմուտքում՝ Բիւզանդական Կայսրութեան հետ պետական սահմանով (Լիխի/Սուրամի, Մոսքական/Մեսխէթի եւ Խաղտեաց/Լազիստանի լեռնաշղթաներով)։ Հարաւ-արեւմուտքում այն սահմանակից էր արաբական Աս-Սուղուր Ալ-Ջազարիյյա (Միջագետքի սահմանային գօտուն /Արշամաշատի կողմից/), հարաւում՝ արաբական Ալ-Ջազիրա (Վերին Միջագետք) նահանգին (Հայկական Տաւրոսով, Կորդուաց ու Զողայի լեռներով), իսկ հարաւ-արեւելքում՝ արաբական Աձարբայջան նահանգին (Կոտուր-Զագրոշի լեռնաշղթայով, ապա Կոտուր, Արաքս ու Կուր գետերով)։ Արեւելքում Արմինիյան ողողւում էր Կասպից Ծովով։

Այս վարչական սահմաններից դուրս, Արաբական Խալիֆայութեան (Աս-Սուղուր Ալ-Ջազարիյյայի) կազմում մնացին պատմական Փոքր Հայքի հարաւային բոլոր գաւառները, ինչպէս նաեւ Բարձր Հայքի (Աղիւն, Դարանաղի, Եկեղեաց եւ Մուզուր) ու Ծոփքի (Անձիտ, Գաւրէք, Դեգիք եւ Ծոփք Շահունի) արեւմտեան գաւառները։ Նրանք բոլորը ընդգրկուեցին Աս-Սուղուր սահմանային գօտու կազմում։ Դրա մասին է վկայում նաեւ Կամախի ու Մալատիյայի (Մելիտենէի) առկայութիւնը Իբն Խուրդադբիհի Աս-Սուղուր Ալ-Ջազարիյյայի տեղանունների ցանկում[9]։

Միեւնոյն ժամանակ Հայաստանի էթնիկ սահմանները այս կողմերում անփոփոխ մնացին։ Արաբների օրօք հայերը այստեղ շարունակում էին կազմել ազգային մեծամասնութիւն։ Պատահական չէ, որ մօտ 930ին Ալ-Իսթախրին, իսկ 977/8ին՝ Իբն Հաուկալը տուեալ տարածաշրջանը կոչում են Ալ-Արման (Հայոց երկիր)[10]։

Արմինիյայի սահմաններից դուրս մնացին նաեւ Մեծ Հայքի մի շարք հարաւային գաւառներ։ Օրինակ՝ Ալ-Ջազիրայի մաս էին կազմում Աղձնիքի արեւմտեան՝ Անգեղտուն եւ Նփրկերտ գաւառները, ինչպէս նաեւ Կորճայքի Կորդուք գաւառը։ Դրա մասին է վկայում նաեւ նոյն

Իբն Խուրդադբիհի Ալ-Ջազիրայի տեղանունների ցանկում Մայյաֆարիկին (Նփրկերտ) ու Ալ-Ջազիրա/Ջազիրաթ Իբն 'Ումար (Բզաբդէ) քաղաքների, Կարդա (Կորդուք) գաւառի ու Ալ-Ջուդիյ (Արարատ) լեռան առկայութիւնը[11]: Իսկ Ադարբայջանի[12] մաս էին կազմում Վասպուրականի արեւելեան՝ Բաք(ր)ան/Մարանդ, Գարիթեան եւ Պարսպատունիք գաւառները, ինչպէս նաեւ Պարսկահայքի եւ Փայտակարանի բոլոր գաւառները, բացի Հրաքոտ-Պերոժից: Դրա մասին է վկայում դարձեալ Իբն Խուրդադբիհի այս անգամ Ադարբայջանի տեղանունների ցանկում Արաքսից հարաւ գտնուող Բաջարուան (Բագաւան), Բարզանդ, Մարանդ ու Վարսան (Վարդանակերտ) քաղաքների, Մուկան (Մուղան) դաշտավայրի, ինչպէս նաեւ Ուրմիա լճի աւազանից հիւսիս-արեւմուտք գտնուող Սալմաս(տ), Ուրմիյա (Որմի) ու Խուվայյ (Հեր) քաղաքների առկայութիւնը[13]: Հարկ է նշել, որ այս բոլոր տեղանունները արաբագիր միւս աշխարհագիրների մօտ մենք նոյնպէս գտանք «Ադարբայջան» հատուածում[14]: Իբն Ալ-Ֆակիհն էլ յստակ ասում է, որ Ադարբայջանի սահմանները (հիւսիսում) հասնում էին մինչեւ Առ-Ռասը (Արաքսը)[15]:

Հետաքրքրական է նշել, որ արաբ պատմիչ Ալ-Քուֆին (մահ. 926ին) պահպանել է մի կարճ հաղորդագրութիւն, որը որոշ չափով լուսաբանում է վերոյիշեալ գաւառների էթնիկ պատկերը արաբների օրօք: Նրա խօսքերով, փոխարքայ Մարուան Իբն Մուհամմադը հիջրայի 123ին (740/1) «...վերագրաւեց ամբողջ Ադարբայջանը՝ հողեր, որտեղ [շարունակում էին] բնակուել հայերը...»[16]:

Այսպիսով, մենք առաջարկում ենք Կլոդ Մութաֆեանի եւ Էրիկ Վան Լուէի[17], ինչպէս նաեւ Բարկէն Ցարութիւնեանի[18] Հայաստանի պատմութեան ատլասներում Արմինիյային վերաբերող քարտէզներում Արմինիյայի հարաւային (Ալ-Ջազիրա եւ Ադարբայջան նահանգների հետ) սահմանագծում կատարել հետեւեալ ճշգրտումները: Մի դէպքում Արմինիյայի կազմում հարկաւոր է ընդգրկել Աղձնիքի Արզան գաւառը[19], միւս դէպքում՝ Արմինիյայի կազմից անջատել Պարսկահայքի 5 վերին գաւառները՝ Առնան, Զարաւանդը, Զարեհաւանը, Հերն ու Տամբերը, եւ Վասպուրականի 3 արեւելեան գաւառները՝ Բաք(ր)ան/Մարանդը, Գարիթեանն ու Պարսպատունիքը:

Ճշտելով Արմինիյայի արտաքին սահմանները՝ մեզ մնում է որոշել նրա վարչական միաւորների քանակը, ներքին սահմաններն ու տարածքը:

Ժամանակակից արեւելագիտութիւնը վաղուց է հաստատել այն տեսակէտը, թէ՝ Արմինիյան ունեցել է քառեակ բաժանում: Վերոյիշեալ սկզբնաղբիւրներից մի քանիսում մենք իսկապէս կարող ենք գտնել այդպիսի տեղեկութիւններ:

Առաջին այդպիսի սկզբնաղբիւր է Եգիպտոսում ծնուած պատմիչ Ալ-Բալաձուրիի (մահ. 892) կողմից 860ականների երկրորդ կէսին հեղի-

նական Քիթաբ Ֆութուհ Ալ-Բուլդան (երկրների նուաճման գիրք) երկը, որում տեղ են գտել Բարձա՝ այի (Պարտաւ) ու Դաբիլի (Դուին) նախկին բնակիչների բանաւոր վկայութիւնները՝ Արմինիյայի քառեակ բաժանման վերաբերեալ։ Այսպէս, մի տարբերակում կարդում ենք. «Շիմշատը, Կալիկալան, Խիլատը, Արջիշն ու Բաջունայսը կոչում էին Արմինիյա Չորրորդ; Ալ-Բուսֆուռաջան աշխարհը, Դաբիլը, Սիրաջ-Տայրն ու Բաղրաւանդը՝ Արմինիյա Երրորդ; Ջուրզանն էլ՝ [Արմինիյա] Երկրորդ; իսկ Աս-Սիսաջանն ու Առ-Ռանը՝ [Արմինիյա] առաջին»։ Համաձայն միւսի. «Արմինիյա Չորրորդը բաղկացած էր միայն Շիմշատից; Կալիկալան էլ, Խիլատը, Արջիշն ու Բաջունայսը կոչում էին Արմինիյա Երրորդ; Սիրաջ-Տայրը, Բաղրաւանդը, Դաբիլն ու Ալ-Բուսֆուռաջանը՝ [Արմինիյա] Երկրորդ, իսկ Աս-Սիսաջանը, Առ-Ռանն ու Թիֆլիսը՝ [Արմինիյա] Առաջին»[20]։

Արաբագիր աշխարհագիրներից 4 Արմինիյաների մասին առաջինը մօտ 885ին գրում է Իբն Խուրդադբիհը. «Արմինիյա Առաջինն է՝ Աս-Սիսաջանը, Առանը, Թիֆլիսը, Բարձա՝ան, Ալ-Բայլականը, Կաբալան եւ Շիրուանը։

Արմինիյա Երկրորդն է՝ Ջուրզանը, Սուղդաբիլը, Բաբ Ֆիրուզ Կուբաձը եւ...։

Արմինիյա Երրորդն է՝ Ալ-Բուսֆուռաջանը, Դաբիլը, Սիրաջ-Տայրը, Բաղրաւանդը եւ Նաշաւան։

Արմինիյա Չորրորդն է՝ Շիմշատը, Խիլատը, Կալիկալան, Արջիշը եւ Բաջունայսը»[21]։

Նոյն բանը հիջրայի 290ին (902/3) բառացիօրէն կրկնում է Իբն Ալ-Ֆակիհը[22]։

Այս տեղեկութիւններից հետեւում է, որ Արմինիյա Ա.ը - եթէ դուրս թողնենք Թիֆլիսը - ընդգրկում էր նախկին Սասանեան Իրանի Աղուանից Մարզպանութիւնը եւ հայոց Սիւնիքը. Արմինիյա Բ.ը՝ նախկին Սասանեան Իրանի Վրաց Մարզպանութիւնը։ Մնացած երկու Արմինիյաները ընդգրկում էին միայն հայկական տարածքներ. Արմինիյա Գ.ը՝ պատմական Մեծ Հայքի Այրարատ, Վասպուրական, Մոկք, Տայք եւ Կորճայք աշխարհների բոլոր գաւառները, բացի Կորդուքից, իսկ Արմինիյա Դ.ը՝ Աղձնիք, Բարձր Հայք եւ Ծոփք աշխարհների արեւելեան եւ Տուրուբերանի բոլոր գաւառները։

Ի տարբերութիւն այս հաղորդագրութիւնների՝ Ալ-Եա՝կուբիի կողմից հիջրայի 278 (891/2)ին հեղինակած Քիթաբ Ալ-Բուլդան (երկրների գիրք) երկում տրւում է Արմինիյայի եռեակ բաժանում.

«Առաջին մասում են՝ Դաբիլ, Կալիկալա, Խիլատ ու Շիմշատ... քաղաքները։

Երկրորդ մասում են՝ Բարձա՝ա, Ալ-Բայլական, Կաբալա եւ Ալ-Բաբ Ալ-Աբուաբ քաղաքները։

Երրորդ մասում են՝ Զուրզանն ու Թիֆլիսը»[23]։

Եռեակ բաժանումով ստացւում է հետեւեալը.- Արմինիյա Ա.ը ընդգրկում էր բուն Հայաստանը, Արմինիյա Բ.ը՝ Աղուանքը, իսկ Արմինիյա Գ.ը՝ Քարթլին։ Այսպիսով, Ալ-Եա՛կուբիի մօտ Արմինիյայի վարչական միաւորների քանակը համապատասխանում է տարածաշրջանի երկրների թուին, իսկ տարածքները՝ նրանց այն ժամանակուայ սահմաններին։ Միեւնոյն ժամանակ միաւորների յաջորդական համարները նրա մօտ լիովին տարբերւում են միւսներից։ Պատմագիտութեանը յայտնի փաստ է, որ Խորասանում ծնուած Ալ-Եա՛կուբին երիտասարդ ժամանակ (Թ. դարի առաջին կէս) երկար տարիներ պետական ծառայութեան մէջ է եղել Արմինիյայում[24], որտեղ իր նախապապը՝ Վաղիհ Ալ-Աբբասին, 775ին նահանգապետ էր։ Այնպէս որ, այս հեղինակի Արմինիյայի աշխարհագրութեանը եւ վարչատարածքային բաժանմանը վերաբերող բոլոր նիւթերը պէտք է քաղուած լինէին պաշտօնական աղբիւրներից, հետեւաբար, ունեն բացառիկ բնոյթ։

Հաշուի առնելով այս կարեւոր հանգամանքը, ինչպէս նաեւ Ալ-Բալաձուրիի մօտ վարչական միաւորների շուրջ առկայ տարակարծութիւնները եւ միւս արաբագիր սկզբնաղբիւրներում, ինչպէս նաեւ ժամանակի հայ մատենագիրների մօտ Արմինիյայի քառեակ բաժանման մասին տեղեկութիւնների բացակայութիւնը՝ յստակ կարելի է առարկել, որ Արաբական Խալիֆայութեան հիւսիսային նահանգը ունեցել է եռեակ, այլ ոչ թէ քառեակ բաժանում։ Ինչ վերաբերւում է Ալ-Բալաձուրիի եւ միւս երկու մատենագիրների մօտ տեղ գտած հաղորդագրութիւններին, ապա դրանք, հաւանական է, բիւզանդական Հայաստանի 536ից յետոյ յայտնի քառեակ բաժանման պատմական յիշողութիւնից են։ Աւելին, արաբագիր մատենագիրները ե՛ւ Սասանեան Իրանն էին աւանդաբար ներկայացնում այդպիսի քառեակ բաժանմամբ, ե՛ւ իրենց յայտնի ամբողջ աշխարհը։

Միեւնոյն ժամանակ, սակայն, պէտք է խոստովանել, որ Ալ-Եա՛կուբին ունի պատմական մի երկ՝ Թարիխ (պատմութիւն) վերնագրով, որտեղ նա մէկ անգամ յիշատակում է «Արմինիյա Զորրորդ» (արաբ.՝ Արմինիյա Ռա-Ռաբի՛ա) եզրը[25]։ Այս նոյն եզրը մէկ անգամ յայտնաբերեցինք նաեւ արաբական պատմագրութեան հիմնադիրներից մէկի՝ իրաքցի պատմիչ Խալիֆա Իբն Խայեաթի (776/7-854) մօտ[26]։ Սակայն սրանց երկերում չկան Արմինիյա Ա., Արմինիյա Բ., ոչ էլ Արմինիյա Գ. հասկացութիւնները։ Իսկ ենթախորքից հետեւում է, որ խօսքը վերաբերում է Բիւզանդիային սահմանակից պատմական Զորրորդ Հայքին, որ է Մոփաց կողմն, յետագայում՝ Բիւզանդական Զորրորդ Հայք պրովինցիային, որն արաբների օրօք արդէն ունէր ոչ թէ վարչական միաւորի նշանակութիւն, այլ՝ պատմաաշխարհագրական մարզի[27]։

Եւ այսպէս, Արմինիյան փաստօրէն բաղկացած էր Հայաստանից՝ Դուին կենտրոնով, Քարթլիից՝ Թբիլիսի կենտրոնով եւ Աղուանքից՝ Պարտաւ կենտրոնով։ Այնպէս որ, վերոյիշեալ ատլասները վերահրատարակելիս, հեղինակներին կ՝առաջարկէինք հաշուի առնել նաեւ այս փաստը։

Ցայտնի արաբագէտ Արամ Տէր-Ղեւոնդեանը գտնում էր, որ արաբների օրօք Արցախն ու Սիւնիքը միանշանակ եղել են Հայաստանի կազմում[28]։ Սիւնիքի վերաբերեալ նոյն տեսակէտն է յայտնում Նինա Գարսոյեանը[29]։ Սակայն արաբագիր մատենագիրների վերոյիշեալ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ պատմական Մեծ Հայքի հայապատկան այս աշխարհները բացակայում են Հայաստանի տեղանունների արաբական ցանկերից։ Աւելին՝ բոլոր արաբագիր աշխարհագիրները միաձայն պնդում էին, որ Աս-Սիսաջանը (Սիսական/Սիւնիքը) Առ-Ռանի (Աղուանքի) կազմում է։ Հետեւաբար, մեկնելով նրանց նշած տեղեկութիւններից՝ Սիսական/Սիւնիքից դէպի արեւելք գտնուող Արցախը չէր կարող յայտնուել այդ շրջանի Հայաստանի կազմում։ Նշենք, որ արաբական Հայաստանի տեղանունների ցանկերից բացակայում էր նաեւ Գուգարք Աշխարհը։ Անկասկած նա շարունակում էր Սասանեանների ժամանակաշրջանից սկսած գտնուել հարեւան Քարթլիի կազմում։

Արաբագիր մատենագրութիւնում Արմինիյան յաճախ շփոթւում է բուն Հայաստանի հետ, սակայն ենթախորքից գրեթէ միշտ էլ կարելի է որոշել թէ ինչի մասին է խօսքը՝ միայն Հայաստանի՞, թէ՞ ամբողջ նահանգի։

Իբն Ալ-Ֆակիհը հիջրայի մօտ 290 (902/3)ին, վկայակոչելով Ալ-Եա՝կուբիին, Արմինիյայում հաշւում է 113 թագաւորութիւն/իշխանութիւն (արաբ.՝ մամլաքա) եւ 18 հազար գիւղատեղ (արաբ.՝ կարիյա)[30]։ Մենք համոզուած ենք, որ տուեալ պահին աշխարհագիրը նկատի ունի միայն Հայաստանը։ Խօսելով գիւղատեղերի քանակի մասին, նա նշում է, որ եւս 4 հազարը գտնուում են (հարեւան) Առանի (Աղուանքի) տարածքում[31]։

Սկզբնաղբիւրների վերոյիշեալ դրուագների վերլուծութիւնը, ինչպէս նաեւ Իբն Ալ-Ֆակիհի Արմինիյայի 113 թագաւորութիւնների/իշխանութիւնների վերաբերեալ տեղեկութիւնը թոյլ են տալիս մեզ եզրակացնել, որ Հայաստանը (Արմինիյա Ա.ը) ընդգրկում էր պատմական Մեծ Հայքի 9 աշխարհների հետեւեալ 113 գաւառները.

1. Աղձնիք (17.532 քառ. կլմ.)։ 11 գաւառներից չեն ընդգրկուել միայն 2ը՝ Անգեղտունը եւ Նփրկերտը (7.825 քառ. կլմ. ընդհանուր մակերեսով).

2. Այրարատ (40.105 քառ. կլմ.)։ Ընդգրկուել են բոլոր 22 գաւառները.

3. *Բարձր Հայք* (23.860 քառ. կլմ.)։ 9 գաւառներից չեն ընդգրկուել 5ը՝ *Աղիւնը, Դարանաղին, Եկեղեացը, Մուզուրը* եւ *Սպերը* (15.735 քառ. կլմ. ընդհանուր մակերեսով)։

4. *Վասպուրական* (40.870 քառ. կլմ.)։ 35 գաւառներից չեն ընդգրկուել միայն 3ը՝ *Բաք(ր)անը/Մարանդը, Գաբիթեանը* եւ *Պարսպատունիքը* (11.925 քառ. կլմ. ընդհանուր մակերեսով)։

5. *Կորճայք* (14.707 քառ. կլմ.)։ 11 գաւառներից չի ընդգրկուել միայն 1ը՝ *Կորդուքը*, (5.825 քառ. կլմ. մակերեսով)։

6. *Մոկք* (2.962 քառ. կլմ.)։ *Ընդգրկուել են բոլոր 8 գաւառները։*

7. *Տայք* (10.179 քառ. կլմ.)։ *Ընդգրկուել են բոլոր 8 գաւառները։*

8. *Տուրուբերան* (25.008 քառ. կլմ.)։ *Ընդգրկուել են բոլոր 16 գաւառները։*

9. *Մոփք* (18.890 քառ. կլմ.)։ 8 գաւառներից չեն ընդգրկուել 4ը՝ *Անձիտը, Գաւրէքը, Դեգիքը* եւ *Մոփք Շահունին* (8.200 քառ. կլմ. ընդհանուր մակերեսով)։

Հիմք ընդունելով Հայաստանի պատմական քարտէզագրութեան հիմնադիր, Ակադեմիկոս Սուրէն Երեմեանի կողմից կատարած հաշուարկները[32], *այս* 113 *գաւառների (ահա թէ ինչ նկատի ունէր Իբն Ալ-Ֆակիհը) ընդհանուր մակերեսը մեր հաշուարկով կազմում էր* 144.603 *քառ. կլմ.։ Այժմ մենք կարող ենք որոշել Արմինիյայի միւս վարչական միաւորների եւ ամբողջ նահանգի մակերեսը։ Առանի, կամ Արմինիյա Բ-ի սահմանները Աղուանից Մարզպանութեան ժամանակաշրջանի համեմատ ընդլայնուել էին Սիւնիքի* (15.237 *քառ. կլմ.) հաշուին։ Այսինքն՝ նրա տարածքը կազմում էր* 87.441 *քառ. կլմ.։ Ջուրզանի, կամ Արմինիյա Գ-ի, սահմանները, ինչպէս նշեցինք, մնացին անփոփոխ Վրաց Մարզպանութեան ժամանակաշրջանից։ Այսինքն՝ նրա տարածքը կազմում էր* 38.988 *քառ. կլմ.։ Այսպիսով, ամբողջ Արմինիյայի մակերեսը հաւասար էր* 271.032 *քառ. կլմ.։*

Ստացւում է, նահանգի խոշորագոյն միաւորը Հայաստանն էր, որին հետեւում էր Աղուանքը, ապա նոր՝ Քարթլին։ Ահա թէ ինչ սկզբունքով էին առաջնորդւում արաբ խալիֆները՝ Արմինիյայի վարչական միաւորները համարակալելիս։

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

---

[1] *Այս եւ միւս աշխարհագիրների երկերը տե՛ս՝* الكتب الجغرافية العربية - *Biblioteca Geographorum Arabicorum*, M. de Goeje (ed.), Pars. I-VIII, Lugduni Batavorum, 1870-1892.

[2] *Ընդհանրապէս արաբները Խալիֆայութիւնը բաժանել էին մի շարք նահանգների, որոնց թիւը փոփոխական էր։ Արաբների կողմից Հայաստանի եւ հարաւկովկասեան երկրների վերջնական նուաճման մասին տե՛ս՝ Ստեփան Մելիք-Բախչեան, Հայաստանը VII–IX դարերում, Երեւան,* 1968, *էջ* 96-108. *Նաեւ՝* Aram Ter-Gevondian, *Armeniya I Arabskii Khalifat, Երեւան,* 1977, *էջ* 71-4. *Նաեւ՝* Nina Garsoian, "The Arab Invasions and

the Rise of the Bagratuni (640–884)", in *The Armenian People from Ancient to Modern Times*, ed. by Richard Hovannisian, 1, New York, 1997, էջ 125-6. նաև՝ A. Shaginian, *Armeniya Nakanune Arabskogo Zavoevaniya*, Ս. Պետերբուրգ, 2003, էջ 103-6։

[3] *Biblioteca*, P. VI, էջ 246։

[4] Նոյն, P. VII, էջ 98։

[5] Հաւանական է որ սա է հիմք հանդիսացել Բ. Ցարուբիւնեանի համար՝ Ալ-Լակզ (Լեկզ/լեզգիների) երկրամասը ընդգրկելու Արմինիյա նահանգի կազմում (Բարկէն Ցարուբիւնեան, Հայաստանի Պատմութեան Ատլաս, Մաս Ա., Երեւան, 2004, էջ 56-7 եւ 58-9)։ Նշենք նաեւ, որ արաբագիր միւս մատենագիրների մօտ Ալ-Լակզը յստակ Խազարական Խաքանութեան կազմում էր։ Ի դէպ, հիւսիսային կովկասի երկրամասերը թուարկելիս Իբն Խուրդադբիհի մօտ դարձեալ հանդիպում ենք այս տեղանուան (*Biblioteca*, P. VI, էջ 124)։

[6] Խուվայլի (Հեր) առկայութիւնը այստեղ, մեր կարծիքով, թիւրիմացութիւն է։ Բանն այն է, որ այն կարելի է գտնել նաեւ Նոյն Իբն Խուրդադբիհի հարեւան Ադարբայջան արաբական նահանգի քաղաքների ցանկում (տե՛ս՝ ibid, էջ 119)։ Աւելին, արաբագիր միւս մատենագիրների մօտ Խուվայլը նոյնպէս Ադարբայջանի կազմում է։

[7] Նոյն, էջ 122-123։

[8] Նոյն, էջ 100, 123։

[9] Նոյն, էջ 97։ Մալատիյան (Մելիտինէ) արաբագիր այլ մատենագիրներ նոյնպէս տեղադրում են Աս-Սուղուր Ալ-Ջազարիյա սահմանային գօտում (օրինակ՝ *Biblioteca*, P. VII, էջ 106-107)։ Պատմական Փոքր Հայքի հիւսիսային բոլոր գաւառները Բիզանդիայի կազմում էին։ Իբն Խուրդադբիհը Աւ-Ռումի քաղաքների թւում յիշատակում է Կուլունիյան (Կոլոնիա) ու Սաբաստիյան (Սեբաստիա, տե՛ս՝ ibid, P. VI, էջ 108 եւ 117)։

[10] Նոյն, P. I, էջ 180-181, P. II, էջ 237։ Այս եզրը կարելի է հանդիպել նաեւ միւսների մօտ։

[11] Նոյն, P. VI, էջ 76, 95։ Մայյաֆարկինը (Նփրկերտ) ու Կարդան (Կորդուք) յոդուածում յիշատակուած միւս մատենագիրները նոյնպէս տեղադրում են Ալ-Ջազիրա նահանգում (օրինակ՝ ibid. P. VII, էջ 106)։

[12] Ադարբայջանը Արաբական Խալիֆայութեան կազմում ինքնուրոյն նահանգ էր, որն զբաղեցնում էր այսօրուան Իրանական Ադրբէջանի (պատմական Ատրպատականի) տարածքը։

[13] Նոյն, P. VI, էջ 119։

[14] Իբն Ռուստայի (ibid, P. VII, էջ 106), Կուդամայի (ibid, P. VI, էջ 244) Իբն Ալ-Ֆակիհի (ibid, P. V, էջ 284-285), Ալ-Իսթախրիի (ibid, P. I, էջ 181-182) եւ Իբն Հաուկալի (ibid, P. II, էջ 239) մօտ։

[15] Նոյն, Vol. V, էջ 296։

[16] كتاب الفتوح لابي محمد احمد بن اعثم الكوفي - *Kitabu'l Futuh by Abu-Muhammad Ahmad Ibn Atham Al-Kufi*, ed. by Abdu'l Muid Khan, Sayid Abdu'l Wahhab Bukhari, 8, Hyderabad, 1395 A.H. / 1976 A.D., էջ 82. Ինչպէս շատ կայսրութիւններում, Խալիֆայութեան վարչական բաժանման հիմքում էթնիկ սահմանները հաշուի չեն առնուել։ Խալիֆները առաջնորդուել են զուտ պետական շահերից։ Դրա վառ ապացոյցն է այն, որ հայաբնակ մի շարք գաւառներ յայտնուեցին հարեւան Ադարբայջան, կամ Ալ-Ջազիրա նահանգների կազմում։

[17] Claude Mutafian & Eric Van Lauwe, *Atlas Historique de l'Arménie. Proche-Orient et Sud-Caucase du VIIE siècle av. J.-C. au XXE siècle*, Paris, 2001, էջ 45։

[18] Ցարուբիւնեան, էջ 56-57 եւ 58-59։

[19] Այն, որ Արզանը Արմինիյայի կազմում էր, նշում է ոչ միայն Իբն Ռուստան, այլև՝ Իբն Հաուկալը (տե՛ս՝ *Biblioteca*, P. II, էջ 344).

[20] كتاب فتوح البلدان تأليف الامام ابي العباس احمد بن يحيى البلاذري — *Liber Expugnationis Regionum Auctore Imamo Ahmed Ibn Jahja Ibn Djabir al-Beladsori*, ed. M. de Goeje, Lugduni Batavorum, 1866, էջ 194.

[21] *Biblioteca*, P. VI, էջ 122.

[22] Նույն, P. V, էջ 286, 287. նաև՝ Nekatoriye Neopublikovanniye Glavy Truda Ibn Al-Fakikha "Akhbar Al-Buldan" po Meshkhedskoi Rukopisi թրգմ.՝ Ա. Ժամկոչյան, Երևան, 1979, էջ 100a (89).

[23] *Biblioteca*, P. VII, էջ 364.

[24] Ահա թէ ինչ է այդ մասին վկայում Իբն Ալ-Ֆակիհ՝ Ահմադ Իբն Վազիհ (Ալ-Եա՛կուբի). «... յայտնեց [ինձ այն մասին], որ նա երկար տարիներ է ապրել Հայաստանն երկրում (այսինքն Արմինիյայում - Ա.Շ.) եւ ատենադպիր եղել նրա շատ արքաների (այսինքն՝ իշխանների - Ա.Շ.) ու կառավարիչների մօտ...» (*Biblioteca*, P. V, էջ 290-1).

[25] Տե՛ս՝ تاريخ احمد بن ابي يعقوب بن جعفر بن وهب ابن واضح الكاتب العباسيّ المعروف باليعقوبي *Ibn Wadhih Qui Dicitur Al-Ja'qubi, Historiae*, ed. M. Houtsma, 2, Lugduni Batavorum, 1883, p. 378.

[26] تاريخ خليفة بن خيّاط \ حققه وقدّم له اكرم ضياء العمري - *The History of Khalifah ibn Khayyat*, ed. by Akram Diya' al-Umari, Nagav, 1386–1387 A.H. / 1967 A.D. էջ 436.

[27] Ի դէպ, Զորբորդ Հայք եզրը հանդիպում է տուեալ ժամանակաշրջանի ոչ միայն արաբական մատենագրութիւնում, այլև՝ ասորական եւ բիւզանդական.

[28] Ter-Gevondian, էջ 166 եւ քարտէզ.

[29] Garsoian, էջ 119 (քարտէզ թիւ 8).

[30] *Biblioteca*, P. V, էջ 290-91.

[31] Նոյն, էջ 291.

[32] Սուրէն Երեմեան, Հայաստանը Լաս «Աշխարհացոյցի» (Գրքի VII Դարի Հայկական Քարտէզի Վերակազմութեան ժամանակակից Քարտէզագրական Հիմքի Վրայ), Երեւան, 1963, (Յաւելուած Բ.), էջ 116-120.

THE ADMINISTRATIVE AND TERRITORIAL DIVISION OF THE ARAB PROVINCE OF *ARMINIYA* AND ITS FRONTIERS ACCORDING TO ARABIC SOURCES

(Summary)

ARSEN K. SHAHINYAN
a_shaginyan@mail.ru

According to the first Arabic geographers and historians (9th-10th centuries), Armenia (arab. *Arminiya*), Eastern Georgia/Kartli (arab. *Jurzan*) and Caucasian Albania (arab. *Ar-Ran*) constituted the single province of *Arminiya* in the Arab Caliphate (701–886).

On the north *Arminiya* bordered the Khazar Khaganate (delimited by the Great Caucasian Mountain range). It coincided with the state borders of the Arab Caliphate. In the north-west and the west *Arminiya*'s neighbor was the Byzantine Empire (delimited by the Likh, Meskheti and Lazistan mountain ranges). In the south-west *Arminiya*'s frontiers reached to the fortified Arab border zone of As-Sughur (near the city of Arshamashat). The Arab province of al-Jazira (Upper Mesopotamia) flanked its southern border (delimited by the Armenian Taurus and Kurdish mountains). The Arab province of Adharbayjan (delimited by the Kotur-Zagros mountain range and the Kotur, Araxes and Kur rivers) constituted its south-eastern neighbor, and on the east *Arminiya* was washed by the Caspian Sea.

Basing his suggestions on Arabic sources, the author suggests certain modifications to the maps, which are currently in circulation. He recommends including the Arzan region in the *Arminiya* province, while excluding the five upper regions of Persoarmenia and the three eastern regions of Vaspurakan. He notes, however, that the Caliphate had not divided its conquered areas according to ethnic criteria. Rather he underlines that several areas which were populated by ethnic Armenians were combined with non-Armenian areas.

On another note, the author refutes the long-standing view that *Arminiya* consisted of four administrative units, namely *Arminiya I* (i.e. Albania), *Arminiya II* (i.e. Kartli), *Arminiya III* and *Arminiya IV* (i.e. Armenia). The author supports his argument by referring to the distinguished Arab historian and geographer Al-Ya'kubi (d. 897). The latter was very familiar with Armenia, as his grandfather, Wadih 'Abbas, had been its governor in 775 and he himself had served there during his youth. Al-Ya'kubi testifies that *Arminiya* consisted of three administrative units, namely *Arminiya I* (i.e. Armenia) with Dabil/Dvin as its capital, *Arminiya II* (i.e. Albania) with Bardha'a/Partav as its capital and *Arminiya III* (i.e. Kartli) with Tiflis/Tbilisi as its capital.

Finally, the author calculates the area of the province of *Arminiya*, which sums up to 271,032 sq. kms.